Հավելված
ՀՀ հաշվեքննիչ պալատի
2024թ. հոկտեմբերի 31-ի թիվ 99-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ 3 էջ
2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 5 էջ
3. ԱՄՓՈՓԱԳԻՐ 6 էջ
4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 7 էջ
5. ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻՊԵՏԱԿԱՆԲՅՈՒՋԵԻՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ 8 էջ
6. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ 10 էջ
7. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ 14 էջ
8. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 16 էջ
9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 23 էջ

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը[1]	Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի հուլիսի 18-ի թիվ 78-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:
Հաշվեքննության առարկան	2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» № 2323-Ն որոշում, ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի № 699-Լ և № 727-Լ որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 659-Լ որոշում, ՀՀ ֆինանսների նախարարի 2019թ. մարտի 13-ի № 254-Ն հրաման և այլ իրավական ակտեր:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2024 թվականի հունվարի 1-ից 2024 թվականի հունիսի 30-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2024 թվականի օգոստոսի 1-ից 2024 թվականի հոկտեմբերի 31-ը ներառյալ:

[1] *«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սույն Ընթացիկ եզրակացությունն օգտագործվում է ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը կազմելու համար:*

Հաշվեքննության մեթոդաբանությունը[2]	Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն է իրականացվել համապատասխան մեթոդաբանությունների և պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների ու տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն:
Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է Հաշվեքննիչ պալատի երրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Գագիկ Բարսեղյանը:

[2] *«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Հաշվեքննիչ պալատի հաշվեքննությունների մեթոդաբանությունները հիմնված են Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) սկզբունքների, ստանդարտների ու ուղեցույցների վրա:*

2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՊ	Հաշվեքննիչ պալատ
Նախարարություն	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

3. ԱՄՓՈՓԱԳԻՐ

Նախարարությունում 2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության հաշվեքննությամբ արձանագրված ուշագրավ փաստերն են.

- 2024 թվականի ընթացքում կնքվել են 55 գնման պայմանագրեր՝ 6,300,778.5 հազ. դրամ ընդհանուր արժեքով, որոնց դիմաց 1-ին կիսամյակի ընթացքում վճարվել է 2,360,709.9 հազ. դրամ: Էլեկտրոնային գնումների համակարգում (PPCM) վերոնշյալ պայմանագրերի հանձնման-ընդունման արձանագրությունները չեն հրապարակվել, ինչը հանգեցրել է գնման պայմանագրերի կառավարման հաշվետվողականության համար սահմանված պահանջների նկատմամբ անհամապատասխանության:
  (Մանրամասները ներկայացված են սույն եզրակացության VI բաժնում):
- Նախարարության կողմից 2024 թվականի 1-ին կիսամյակում ֆինանսական հաշվետվություններում փաստացի ծախսի և կրեդիտորական պարտքերի արտացոլման մասով արձանագրված անհամապատասխանությունները հանգեցրել են 803,130.6 հազ. դրամի չափով խեղաթյուրման[3] (փաստացի ծախսի մասով՝ 214,798.0 հազ. դրամ, կրեդիտորական պարտքերի մասով՝ հաշվետու ժամանակահատվածի սկզբի դրությամբ՝ 186,767.3 հազ. դրամ, վերջի դրությամբ՝ 401,565.3 հազ. դրամ):
  (Մանրամասները ներկայացված են սույն եզրակացության VI և VII բաժիններում):

[3] *Տվյալ դեպքում արձանագրված՝ հաշվապահական հաշվառման ֆինանսական հաշվետվությունների խեղաթյուրումները, օրենսդրության համաձայն, ազդեցություն չեն կարող ունենալ Հաշվեքննիչ պալատի կողմից պետական բյուջեի կատարման վերաբերյալ տրվող կարծիքի վրա. «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքով (27-րդ հոդված) Հաշվեքննիչ պալատը պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը, ներառյալ կարծիքը, ներկայացնում է կառավարության կողմից ներկայացվող պետական բյուջեի կատարման վերաբերյալ: «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը ներառում է՝ «պետական բյուջեի եկամուտների, ծախսերի և դեֆիցիտի (հավելուրդի) հիմնավորվածությունը, դրանց համեմատական վերլուծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա փաստացի, ինչպես նաև հաշվետու տարվա համար հաստատված և փաստացի կատարված համապատասխան ցուցանիշների նկատմամբ»:*

4 ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ[4]

Նախարարությունից ստացված տեղեկատվությունը հիմնականում բավարար է եղել հաշվեքննության իրականացման համար:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակահատվածում, Նախարարության կողմից «Պետական աջակցություն բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքներ» (1232-12002) միջոցառման իրականացման շրջանակներում չեն պահպանվել ֆինանսական հաշվետվություններում գումարի, դասակարգման, ներկայացման կամ բացահայտման նկատմամբ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Արձանագրված անհամապատասխանությունները հաշվետու ժամանակահատվածի հաշվետվություններում հանգեցրել են՝

- Փաստացի ծախսի մասով՝ 214,798.0 հազ. դրամ,
- Կրեդիտորական պարտքերի մասով, հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ՝ 186,767.3 հազ. դրամ, վերջի դրությամբ՝ 401,565.3 հազ. դրամի չափով խեղաթյուրումների:

Արձանագրված անհամապատասխանություններն ու խեղաթյուրումները նկարագրված են սույն ընթացիկ եզրակացության VI և VII բաժիններում:

[4] *Հաշվեքննությունը նպատակ է հետապնդել հաշվեքննության առարկային վերաբերելի տեղեկատվության ներկայացուցչական ընտրանքով (100%-ից փոքր) ձեռք բերել բավարար, համապատասխան հաշվեքննության ապացույցներ, որոնց կուտակմամբ ձևավորվելու է պետական բյուջեի տարեկան կատարման վերաբերյալ եզրակացությունը՝ ներառյալ հաշվեքննության կարծիքը, որով պետք է արտահայտվի ողջամիտ (ոչ բացարձակ) հավաստիացում առ այն, թե պետական բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը, բոլոր էական առումներով, ներկայացնու՞մ է արդյոք ՀՀ պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության ճշմարիտ ու իրական պատկերը:*

5. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նախարարությանը՝ որպես ծրագրերի կատարողի, 2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների պլանով նախատեսվել է 110,481,188.50 հազ. դրամ, ճշտված պլանը կազմել է 114,436,136.1 հազ.դրամ, ֆինանսավորումը՝ 101,963,491.72 հազ.դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 95,403,122.2 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 99,263,189.3 հազ. դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ճշտված պլանի նկատմամբ դրամարկղային ծախսը կազմել է 83.37%, ըստ ծրագրերի ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Նախարարության 2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների ցուցանիշները

(հազար դրամ)

Ծրագրի դասիչ	ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պլան	Ճշտված պլան	Փաստ (դրամարկղային ծախս)	Փաստացի ծախս
	Ընդամենը	110,481,188.5	114,436,136.1	95,403,122.2	99,263,189.3
1001	Տարածքային կառավարման ոլորտում քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգի իրականացում	717,159.4	718,988.9	667,079.2	750,339.0
1015	Սոցիալական փաթեթների ապահովում	0.0	31,890.0	29,670.0	35,610.0
1019	Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագիր	3,664,883.3	3,889,883.3	3,408,348.6	3,408,348.6
1038	Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների մասնագիտական վերապատրաստում և հատուկ ուսուցում	4,378.3	4,378.3	3,516.7	3,516.7
1040	Կոշտ թափոնների կառավարում	477,952.9	477,952.9	11,172.5	11,172.5
1049	Ճանապարհային ցանցի բարելավում	29,708,049.6	37,692,716.2	27,469,349.9	28,581,867.4
1072	Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում	0.0	10,000.0	0.0	0.0
1073	Ընդերքի ուսումնասիրության, օգտագործման և պահպանման ծառայություններ	9,900.0	9,900.0	9,900.0	11,066.8
1077	Երկաթուղային ցանցի զարգացում	327,445.0	332,635.2	332,635.2	332,635.2
1110	Այլընտրանքային աշխատանքային ծառայություն	3,780.0	3,780.0	3,780.0	3,780.0
1146	Հանրակրթության ծրագիր	9,013,404.7	9,013,404.7	8,987,712.8	11,260,949.2
1148	Արտադպրոցական դաստիարակության ծրագիր	8,103.0	8,103.0	8,103.0	10,072.9
1157	Քաղաքային զարգացում	8,724,942.0	7,912,586.2	1,965,705.3	1,971,110.3
1167	Էլեկտրաէներգետիկ համակարգի զարգացման ծրագիր	0.0	0.0	0.0	0.0
1171	Ռադիոակտիվ թափոնների կառավարում	18,120.0	18,120.0	18,120.0	21,475.0
1189	Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագիր	6,310,162.2	6,351,107.7	5,227,087.6	5,227,087.6
1192	Կրթության որակի ապահովում	307,475.9	381,475.9	381,468.0	552,908.5
1198	Մշակութային և գեղագիտական դաստիարակության ծրագիր	28,012.1	28,012.1	28,012.1	28,012.1
1205	Սոցիալական ապահովություն	1,000.0	1,000.0	931.3	931.3
1212	Տարածքային զարգացում	46,107,287.9	46,138,015.9	45,507,287.7	45,507,287.7

1232	Էներգաարդյունավետության ծրագիր	1,187,904.8	1,187,904.8	1,131,423.7	1,330,360.0
1236	Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում	3,647,902.2	10,955.8	0.0	0.0
1238	Նախադպրոցական կրթություն	213,325.2	213,325.2	211,818.6	214,658.6

6. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

6.1 Գնման պայմանագրերի կատարման արդյունքները էլեկտրոնային գնումների համակարգում արտացոլելու վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման № 1 հավելվածի 110-րդ կետի պահանջների նկատմամբ:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի № 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 526-Ն որոշման № 1 հավելվածի 110-րդ կետի համաձայն՝ «Էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված սույն բաժնով սահմանված գործողություններն իրականացվում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով ... », ըստ այդմ, նշված գործողություններն իրականացվում են գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և հաշվետվողականության ենթամոդուլի (PPCM)՝ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով՝ համակարգ ներմուծելով հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ հաստատված եզրակացությունը:

«Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ միջոցառման» (1049-11001) շրջանակում 2024 թվականի ընթացքում կնքվել են 6,300,778.5 հազ. դրամ արժեքով 55 գնման պայմանագրեր, որոնց դիմաց 1-ին կիսամսյակում վճարվել է ընդամենը 2,360,709.9 հազ. դրամ: Նշված պայմանագրերի հանձնման-ընդունման արձանագրությունները էլեկտրոնային գնումների համակարգում չեն հրապարակվել:

Նախարարության դիրքորոշումը՝ *ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար միջպետական, հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման, ինչպես նաև այդ ճանապարհների վրա առկա պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների գնման պայմանագրերի շրջանակներում հանձնման-ընդունման գործընթացի վերաբերյալ հայտնում ենք, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար միջպետական, հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման, ինչպես նաև այդ ճանապարհների վրա առկա պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների գնման պայմանագրերով սահմանվում է, որ այդ պայմանագրերի շրջանակներում հանձնման-ընդունման գործընթացը պետք է իրականացվի էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով: Սակայն 2024 թվականի առաջին*

կիսամյակում հանձնման-ընդունման գործընթացը կազմակերպվել է թղթային եղանակով:

2024 թվականի հուլիս ամսից մի շարք կազմակերպությունների կողմից կապարողական փաստաթղթերը սկսել են ներկայացվել էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով: Թվով 25 պայմանագրերի շրջանակներում /ցանկը կցվում է/ հանձնման-ընդունման գործընթացը հնարավոր չի եղել իրականացնել էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով՝ պայմանավորված տեխնիկական խնդիրներով: Տեխնիկական խնդիրը հետևյալն է՝ նախորդ տարիներին կնքված պայմանագրերը /համաձայնագրերը/ համակարգ մուտքագրելիս վերջինում առկա են եղել կազմակերպության մի քանի գրանցված օգտատիրոջ անվանումներ և հնարավորություն չունենալով նույնականացնելու armeps համակարգում գրանցված օգտատիրոջը, ընտրվել է նույն կազմակերպության համակարգում գրանցված, սակայն armeps համակարգին չկցված անվանում: Արդյունքում ցանկում նշված կազմակերպությունները չունեն կատարողականները էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով ներկայացնելու հնարավորություն:Վերոնշյալ խնդիրն ամբողջությամբ կլուծվի 2025 թվականի հունվար ամսից, երբ բոլոր մուտքագրվող պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությունների կապը էլեկտրոնային գնումների armeps համակարգի հետ փաստելուց հետո միայն պայմանագրերը /համաձայնագրերը/ կմուտքագրվեն համակարգ:

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝ *Նախարարության ներկայացրած դիրքորոշման համաձայն՝ « ... այդ պայմանագրերի շրջանակներում հանձնման-ընդունման գործընթացը պետք է իրականացվի էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով: Սակայն 2024 թվականի առաջին կիսամյակում հանձնման-ընդունման գործընթացը կազմակերպվել է թղթային եղանակով: ... », մինչդեռ էլեկտոնային գնումների համակարգը հանձնման-ընդունման գործընթացը թղթային եղանակով կազմակերպելու դեպքում թույլ է տալիս կատարել կարգի պահանջները՝ նաև նշված փաստաթղթերը սքանավորելու և համակարգ ներբեռնելու միջոցով:*

Ինչ վերաբերում է Նախարարության ներկայացրած տեխնիկական խնդրին («... համակարգ մուտքագրելիս վերջինում առկա են եղել կազմակերպության մի քանի գրանցված օգտատիրոջ անվանումներ և հնարավորություն չունենալով նույնականացնելու armeps համակարգում գրանցված օգտատիրոջը ...»), ապա քանի որ չի բացահայտվել խնդրի էությունը, ինչպես նաև՝ «ընտրվել է նույն կազմակերպության համակարգում գրանցված, սակայն armeps համակարգին չկցված անվանում...» արտահայտության իրավական հիմքը, ուստի ներկայացված դիրքորոշմամբ չի հիմնավորվում անհամապատասխանության բացակայության պատճառաբանությունը:

6.2 Կազմակերպությունների կողմից ներկայացված հաշվետվությունների և պետական բյուջեի համապատասխան հաշվետվություններում արտացոլված ցուցանիշների համապատասխանության վերաբերյալ

Առկա է անհամապատասխանություն «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի 13.03.2019թ. թիվ 254-Ն

հրամանով հաստատված «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» /ձև Հ-2/ և «Հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին» /ձև Հ-4/ հաշվետվություններում փաստացի ծախսերի և կրեդիտորական պարտքերի արտացոլման պահանջների մասով:

Համաձայն «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «....գործառնությունները, այլ դեպքերը և իրադարձությունները ճանաչվում են, երբ դրանք տեղի են ունենում և ներկայացվում են այն ժամանակահատվածների ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են»:

Իրականացվել է կազմակերպությունների կողմից ներկայացված հաշվետվությունների և համապատասխան ժամանակաշրջանի բյուջեի հաշվետվություններում արտացոլված ցուցանիշների համապատասխանության ուսումնասիրություն:

«Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Պետական աջակցություն բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների իրականացման» (1232-12002) միջոցառման ֆինանսավորման համար տարեկան պլանով նախատեսվել է 1,192,000.0 հազ. դրամ, հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանով սահմանվել է 900,000.0 հազ. դրամ: Համաձայն հաշվետվության ձև Հ-2-ի՝ ֆինանսավորումը կազմել է 900,000.0 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 900,000.0 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 1,098,936.3 հազ. դրամ:

ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 26-ի «Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագրի իրականացման կարգը հաստատելու, ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 15-ի թիվ 520-Լ որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» № 775-Լ որոշմամբ հաստատվել է «Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագրի իրականացման կարգը»: Համաձայն նախարարի 2022 թվականի հունիսի 17-ի № 25-Լ հրամանով հաստատված Նախարարության և բանկերի ու վարկային կազմակերպությունների միջև համագործակցության պայմանագրի օրինակելի ձևի 10-րդ կետի 1-ին ենթակետի՝ ֆինանսական կառույցը պարտավոր է՝ «...մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը Նախարարության էլեկտրոնային փոստի հասցեով (mtai.secretariat@gmail.com) ներկայացնել Սուբսիդավորման գումարի փոխանցման վերաբերյալ հայտ...», իսկ պայմանագրի 11-րդ կետով Նախարարությունը պարտավոր է « ... պայմանագրի 10-րդ կետի 1-ին ենթակետում նշված տեղեկությունները ստանալուց հետո առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրել դրանց համապատասխանությունը Որոշմամբ և Կարգով սահմանված պահանջներին (պահանջներին բավարարող

Շահառուն ինքնաշխատ եղանակով համարվում է Ծրագրի շահառու) և Ֆինանսական կառույցի Հատուկ հաշվին փոխանցել հայտի ներկայացմանը նախորդող ամսվա ընթացքում տրամադրված վարկերի գծով նախատեսված Սուբսիդավորման գումարները»:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ տվյալ ծրագրային միջոցառմամբ՝

- 2023 թվականի դեկտեմբեր ամսվա համար հաշվարկված՝ 186,767.3 հազ. դրամի սուբսիդավորման հայտերը սահմանված կարգով ներկայացվել են Նախարարությանը 2024թ. հունվար ամսին և վճարումները կատարվել են 2024 թվականին: Այդուհանդերձ, 2024 թվականի 1-ին կիսամյակի հաշվետվության մեջ հունվարի 1-ի դրությամբ որպես կրեդիտորական պարտք արտացոլվել է 0, այն դեպքում, երբ այն կազմել է 186,767.3 հազ. դրամ:
- Նախարարության 2024 թվականի 1-ին կիսամյակի հաշվետվության մեջ որպես փաստացի ծախսի ցուցանիշ արտացոլվել է 1,098,936.3 հազ. դրամ, այն դեպքում, երբ կազմակերպությունների կողմից ներկայացրած հայտերի համաձայն, այդ ցուցանիշը 1,313,734.3 հազ. դրամ է կամ տարբերությունը կազմում է 214,798.0 հազ. դրամ:
- Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպությունների կողմից ներկայացրած հայտերի հիման վրա ձևավորված (կուտակված) վճարման ենթակա պարտավորությունը՝ կրեդիտորական պարտքը կազմել է 1,313,734.3 հազ. դրամ: 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա կրեդիտորական պարտքը, ինչպես նշվել է վերևում, կազմել է 186,767.3 հազ. դրամ կամ հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ վճարման ենթակա պարտավորությունը՝ կրեդիտորական պարտքը կազմել է 1,500,501.6 հազ. դրամ:

  2024 թվականի 1-ին կիսամյակում Նախարարության դրամարկղային ծախսը կազմել է 900,000.0 հազ. դրամ: Արդյունքում, հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ վճարման ենթակա պարտավորության՝ կրեդիտորական պարտքի գումարը կազմում է 600,501.6 հազ. դրամ (1,500,501.6-900,000.0): Մինչդեռ, Նախարարության նույն ժամանակահատվածի վերջի դրությամբ կրեդիտորական պարտքն արտացոլվել է 198,936.3 հազ.դրամ: Տարբերությունը կազմում է 401,565.3 հազ. դրամ (600,501.6-198,936.3):

Նախարարության կողմից ֆինանսական հաշվետվություններում փաստացի ծախսի և կրեդիտորական պարտքերի արտացոլման մասով առկա տարբերությունները հանգեցրել են խեղաթյուրման, որը մանրամասն (ներառյալ Նախարարության դիրքորոշումը և հաշվեքննողների մեկնաբանությունները) ներկայացված է սույն եզրակացության VII բաժնում:

7. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Կազմակերպությունների կողմից ներկայացված հաշվետվությունների և պետական բյուջեի համապատասխան հաշվետվություններում արտացոլված ցուցանիշների համապատասխանության վերաբերյալ

Առկա է խեղաթյուրում 803,130,6 հազ. դրամի չափով:

6.2-րդ կետում նշված անհամապատասխանությունը հանգեցրել է 2023 և 2024 թվականների ֆինանսական հաշվետվությունների խեղաթյուրման (որից՝ 186,767.3 հազ. դրամը չի արտացոլվել 2023 թվականի փաստացի ծախսի և համապատասխանաբար տարեվերջի և 2024 թվականի տարեսկզբի կրեդիտորական պարտքերի ցուցանիշներում, իսկ 214,798.0 հազ. դրամը և 401,565.3 հազ. դրամը՝ 2024 թվականի 1-ին կիսամյակի փաստացի ծախսի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի կրեդիտորական պարտքերի ցուցանիշներում):

Նախարարության դիրքորոշումը՝ *Համաձայն «ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 15- թիվ 520-Լ որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» N 775-Լ որոշմամբ հաստատված «Բնակարանների և անհատական բնակելի տների , էներգաարդյունավետ վերանորգման աշխատանքների պետական աջակցության ծրագրի իրականացման կարգի»: ՏԿԵ նախարարի 2022 թվականի հունիսի 17-ի N 25-Լ հրամանով հաստատված Նախարարության և բանկերի ու վարկային կազմակերպությունների միջև համագործակցության պայմանագրի օրինակելի ձևի 10-րդ կետի առաջին ենթակետի՝ ֆինանսական կառույցը պարտավոր է «.. մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը Նախարարության էլ. փոստի հասցեով ներկայացնել սուբսիդավորման գումարի փոխանցման վերաբերյալ հայտ»: Իսկ պայմանագրի 11-րդ կետով Նախարարությունը պարտավոր է պայմանագրի 10-րդ կետի առաջին ենթակետում նշված տեղեկությունները ստանալուց հետո, առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրել դրանց համապատասխանությունը որոշմամբ և կարգով սահմանված պահանջներին և ֆինանսական կառույցի հատուկ հաշվին փոխանցել հայտի ներկայացմանը նախորդող ամսվա ընթացքում տրամադրված վարկերի գծով նախատեսված սուբսիդավորման գումարները:*

Հարկ է նշել, որ 2023 թվականի դեկտեմբեր ամսվա սուբսիդավորման հայտերը համաձայն՝ ՀՀ ՏԿԵ նախարարի 2022 թվականի հունիսի 17-ի 25-Լ հրամանի Նախարարություն ներկայացվել են 2024 թվականի հունվար ամսին և հետևաբար վճարում նույնպես համաձայն կարգի և հրամանի կատարվել է սույն թվականի հունվար ամսին: Ելնելով վերոգրայից հայտնում ենք, որ որևէ անհամապատասխանություն, որը հանգեցրել է 2023 և 2024 թվակնների հաշվետվությունների խեղաթյուրման առկա չէ, ուստի անհրաժեշտ է խմբագրել արձանագրության 3-րդ բաժնի 3-րդ պարբերությունը և 4-րդ բաժնի 1-ին կետի 2-րդ պարբերությունը՝ բացառելով «խեղաթյուրում» եզրույթի կիրառությունը:

1232 ծրագրի 12002 միջոցառման մասով՝ ՀՀ ֆինանսների նախարության հետ բանավոր քննարկման արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ ծրագրին մասնակից բանկերն ու վարկային կազմակերպությունները հանրային հատվածի

հաշվապահական հաշվառման ծրագրում դիտարկվեն, որպես ֆինանսական գործակալներ, իսկ այդ պարագայում դեբիտորական և կրեդիտորական պարտքեր չեն առաջանա, քանի որ վճարումը պետք է կատարվի <u>տվյալ պահին ծրագրում առկա ֆինանսական միջոցներին համապատասխան</u> (անկախ ներկայացված հայտի ֆինասական միջոցների չափի):

Միաժամանակ հայտնում ենք, որ ՏԿԵ նախարարությունը որպես հանրային հատվածի հաշվապահական հաշվառման քաղաքանություն մշակող պետական լիազոր մարմին, դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ պարզաբանում ստանալու նպատակով, որի արդյունքների վերաբերյալ լրացուցիչ կտեղեկացնենք:

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝ *Հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանությունները հիմնավորված են սույն եզրակացության 6.2-րդ բաժնում հաշվեքննության առարկան կարգավորող իրավական ակտերով և (կամ) քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակում կնքված պայմանագրերով սահմանված չափանիշներին, պահանջներին համապատասխան: Այդ չափանիշների և պահանջների չպահպանումը հանգեցրել է հաշվետվություններում խեղաթյուրման:*

8. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության շրջանակում ուսումնասիրվել է նաև 2023 թվականի պետական բյուջեի տարեկան, ինչպես նաև 2024 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննությունների արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացություններով արձանագրված անհամապատասխանությունների վերացման, առաջարկությունների իրականացման հետ կապված հարցերի ընթացքը:

№	Հաշվեքննիչ պալատի առաջարկությունները	Նախարարության դիրքորոշումը			Ծանոթագրություն ՀՊ-ի մեկնաբանությունը
		Ընդունելի է/ Ընդունելի չէ	Կատարված է/ Ընթացքում է	Պարզաբանում / Բացատրություն	
1	Միջոցներ ձեռնարկել արձանագրված բյուջետային ծրագրերի/միջոցառումների կատարման ընթացքի և հաշվետվությունների արժանահավատության ապահովման նկատմամբ օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանման հսկողական մեխանիզմներ ներդնելու ուղղությամբ:	*ԸՆԴՈՒՆԵԼԻ ՉԷ*	-	Նախարարությունը ունի և կիրառում է օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանման հսկողական մեխանիզմներ:	**ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ** (Անդրադարձ է կատարվել սույն եզրակացության 6.2 կետում)
2	Ձեռնարկել միջոցներ գնման պայմանագրերի գծով կատարողական փաստաթղթերի՝ գնումների PPCM համակարգ մուտքագրման ուղղությամբ՝ դրանով իսկ ապահովելով գնումների թափանցիկության և հրապարակայնության սկզբունքները:	*ԸՆԴՈՒՆԵԼԻ Է*	*ԸՆԹԱՑՔՈՒՄ Է*	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը, չնայած առկա տեխնիկական խնդիրներին, միջոցներ է ձեռնարկել միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պահպանման վերաբերյալ պայմանագրերի շրջանակներում համապատասխան հանձնման-ընդունման արձանագրությունները արդեն հուլիս ամսից PPCM համակարգ մուտքագրելու ուղղությամբ:	**ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ** (Անդրադարձ է կատարվել սույն եզրակացության 6.1 կետում)
3	Ձեռնարկել միջոցներ ճանապարհային գծանշումների որակի պատշաճ հսկողություն ապահովելու ուղղությամբ:	*ԸՆԴՈՒՆԵԼԻ Է*	*ԸՆԹԱՑՔՈՒՄ Է*	2023 թվականի 3-րդ եռամսյակում «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից հայտարարվել է սարքավորումների ձեռքբերման, մասնավորապես՝ գծանշման տեսանելիության ստուգման սարքի, ճանապարհային նշանների լուսանդրադարձակման գործակցի չափման սարքի և գծանշման հաստության չափման սարքի ձեռքբերման	Կատարման ընթացքը կներկայացվի հաջորդիվ իրականացվող

				մրցութային գործընթաց՝ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան: Ապրանքների ձեռքբերման նախահաշվային արժեքը կազմել է 20,286.0 հազ. դրամ: Մրցութային գործընթացի արդյունքում հանթող է ճանաչվել «ՇԱԸ Ակտիվ» ՍՊԸ-ն, որի հետ 26.09.2023թ. կնքվել է պետության կարիքների համար ապրանքների մատակարարման թիվ ՃԴ-ԳՀԱՊՁԲ-2023/05 պայմանագիրը, որի ընդհանուր արժեքը 3 սարքավորումների համար կազմում է 15,681.4 հազ. դրամ: 2023 թվականի 4-րդ եռամսյակի ընթացքում շրջանառվել է Կառավարության որոշման նախագիծ, որով առաջարկվել է վերոնշյալ պայմանագրի ֆինանսավորման համար ՀՀ 2023թ. պետական բյուջեի 1049 ծրագրի 11001 «Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ» միջոցառման «1. Ավտոճանապարհների ձմեռային և ընթացիկ պահպանում» հոդվածի «1.1 Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային և ընթացիկ պահպանում» ենթահոդվածի գումարներից կատարել վերաբաշխում և 15,681.4 հազ. դրամի չափով ուղղել ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի 1049 ծրագրի 11004 «Ավտոմոբիլային ճանապարհների ցանցի հսկողություն, ուսումնասիրություններ և փորձաքննություններ» միջոցառման կատարմանը: Ֆինանսների նախարարության 14.11.2023թ N01/9-1/22208-2023 գրությամբ մերժվել է ֆինանսավորման հայտը և առաջարկվել է հետևյալը. «Նկատի ունենալով, որ ՀՀ կառավարության 06.08.2021թ. N 1298-Ա որոշմամբ հիմնադրամին վերապահված է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու գործառույթ, առաջարկում ենք պահանջվող սարքավորումների ձեռք բերումն իրականացնել հիմնադրամի ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցների հաշվին»: Հաշվի առնելով վերոգրյալը, «Ճանապարհային Դեպարտամենտ» հիմնադրամի կողմից վերանայվել է 2024 թվականի գնումների պլանը և նախատեսվել են ֆինանսական միջոցներ՝ վերոնշյալ սարքավորումների ձեռքբերման համար:	հաշվեքննությունների ընթացքում

				2024 թվականի փետրվարի 29-ին կնքվել է համապատասխան համաձայնագիր «ՇԱԸ Ակտիվ» ՍՊԸ-ի հետ, համաձայն որի սահմանվել է ֆինանսական ժամանակացույցը, և սարքավորումների ձեռքբերումը նախատեսվել է իրականացնել մինչև 2024 թվականի մայիսի 29-ը: Սարքավորումները մատակարարվել են, այժմ ստուգման և փորձարկման փուլում են, որն ամփոփելուց հետո կկատարվեն համապատասխան վճարումները::	
4	Ձեռնարկել միջոցներ ճանապարհների պահպանման աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրերում և դրանց անբաժանելի մաս կազմող՝ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին համաձայնագրերում, ինչպես նաև հանձնման-ընդունման արձանագրություններում պահպանության ենթակա ճանապարհահատվածների տեղամասերի նշակետերի լրացման պահանջի պահպանման ուղղությամբ, ինչը հնարավորություն կընձեռի փաստացի պահպանված և սպասարկված ճանապարհահատվածները նույնականացնել:	*ԸՆԴՈՒՆԵԼԻ Է*	*ԸՆԹԱՑՔՈՒՄ Է*	Ձեռնարկվել են համապատասխան միջոցներ ճանապարհների պահպանման աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրերում և դրանց անբաժանելի մաս կազմող՝ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին համաձայնագրերում, ինչպես նաև հանձնման-ընդունման արձանագրություններում պահպանության ենթակա ճանապարհահատվածների տեղամասերի նշակետերի լրացման ուղղությամբ՝ փաստացի պահպանված և սպասարկված ճանապարհահատվածները նույնականացնելու նպատակով:	Կատարման ընթացքը կներկայացվի հաջորդիվ իրականացվող հաշվեքննություն ների ընթացքում
5	Ձեռնարկել միջոցներ Թիվ ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2023/3Շ պայմանագրի շրջանակներում կատարված 56,126.5 հազ. դրամի խմելու և ոռոգման խողովակների փոխարինման, ջրագծերի վերակառուցման, գազատարի վերատեղադրման աշխատանքների մասով կատարված	*ԸՆԴՈՒՆԵԼԻ ՉԷ*	-	14.04.2023թ. կնքված թիվ ՏԿԵՆՀԲՄԱՇՁԲ-2023/3Շ պայմանագրի շրջանակներում, ի թիվս այլնի, հաղորդակցուղիների փոխարինման, վերակառուցման և մոնտաժային աշխատանքների նեռամանը, ապա տեղեկացնում ենք, որ նշված պայմանագրով հիմնանորոգման ենթակա ճանապարհը նախատեսված է եղել հիմնանորոգել Ասիական Զարգացման բանկի (այսուհետ՝ ԱԶԲ) աջակցությամբ իրականացվող Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ-6, Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագրի (այսուհետ՝	Անդրադարձ կկատարվի հաջորդիվ իրականացվող հաշվեքննություն ների ընթացքում

	վճարումների՝ սեփականատերերից պետական բյուջե վերադարձնելու ուղղությամբ:			Ծրագիր) շրջանակերում: Ծրագրի ազդեցությունների հետ կապված հարաբերությունները կարգավորվել են ԱԶԲ Անվտանգության մեխանիզմների քաղաքականության (2009) պահանջներով և դրա հիման վրա մշակված ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 16-ի N 1274-Ն որոշմամբ հաստատված «Հողերի օտարման և տարաբնակեցման շրջանակը և դրա փոխհատուցման սկզբունքները» N 3 հավելվածի (այսուհետ՝ ՀՕՏԾ) պահանջներով: Ճանապարհաշինարական ծրագրի շրջանակներում հաղորդակցուղիների տեղափոխման հարցին ԱԶԲ-ն անդրադարձել է Հայաստան կատարված իր մի շարք առաքելությունների ընթացքում, որտեղ հստակ արձանագրել է, որ ճանապարհաշինարական ծրագրի շրջանակներում ազդակիր հաղորդակցուղիների սեփականատերերը Անվտանգության մեխանիզմների քաղաքականության (2009) տեսակետից հանդիսանում են ազդեցության ենթակա անձինք, հետևաբար հաղորդակցուղիների տեղափոխումը հանդիսանում է Ծրագրի մաս և ՀՀ-ն պարտավոր է ապահովել դրանց վերականգնումը: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ միջազգային պայմանագրով ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարումն, Ծրագրի բնականոն ընթացքն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 16-ի թիվ 633-Ա որոշմամբ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը թույլատրվել է ձեռք բերել Մ-6, Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի վերականգնման և բարելավման ծրագրի շրջանակներում հաղորդակցուղիների տեղափոխման նախագծային, հեղինակային և տեխնիկական հսկողության ծառայություններ: Վերոգրյալով պայմանավորված և ելնելով ՀՀ կողմից կնքված միջազգային պայմանագրերի պահանջներից՝ հաղորդակցուղիների տեղափոխման աշխատանքներն ընգրկվել են Ծրագրի կապալառուների շինարարական պայմանագրերի ծավալներում: Հիշյալ որոշման հիման վրա 19.07.2016թ. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության և «Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ միջև կնքվել է նախագծերի	

				պատրատման և ծախսերի գնահատման աշխատանքների կատարման թիվ ՏԿՆ-ԲԸՀԱՇՁԲ-2016/1 պետական գնման պայմանագիր: Հետագայում որոշվել է Մ-6, Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի ՊԿ384+50-ՊԿ481+40 /ՊԿ467+50-ՊԿ473+61/ տեղամասի (Օձունի խաչմերուկի /Մ6 և Հ35/ ավտոճանապարհների փոխհատում) վերականգնման և բարելավման աշխատանքներն իրականացնել պետական բյուջեի միջոցների հաշվին: Այսինքն՝ չնայած այն հանգամանքին, որ վերը նշված ճանապարհահատվածի վերականգնման և բարելավման աշխատանքներն իրականացվել են պետական բյուջեի միջոցների հաշվին, այնուամենայնիվ վերջինս շարունակել է հանդիսանալ Ծրագրի առընչվող մաս և վերջինիս հետ կապված սոցիալական հարցերը կարգավորվել են Ծրագրի պահանջներին համապատասխան: Մասնավորապես, տվյալ ճանապարհահատվածի հաղորդակցուղիների օտարումը ներառված է եղել Ծրագրի նախագծի օտարման գոտում և Ծրագրի շրջանակներում օտարված է եղել Հայաստանի Հանրապետությանը:	
6	Ձեռնարկել միջոցներ Նախարարության կողմից շահագործվող բոլոր թղթային գրանցամատյանները թվայնացնելու և ըստ անհրաժեշտության՝ դրանց առարկաներին վերաբերելի տվյալներ պարունակող էլեկտրոնային այլ համակարգերի հետ տեղեկատվության փոխանակման ինքնաշխատ մեխանիզմներ ներդնելու ուղղությամբ:	*ԸՆԴՈՒՆԵԼԻ Է*	*ԸՆԹԱՑՔՈՒՄ Է*	... Նախարարության արձանագրած առաջնահերթություններին, որը ներառում է մատուցվող ծառայությունների թվայնացումը, որի արդյունքում, մատուցված ծառայության վերջնական փուլում ձևավորվում են տվյալ ծառայության արդյունքները վավերացնող էլեկտրոնային գրանցամատյանները: 1/ Ծանրաքաշ, չմասնատվող կամ մեծ եզրաչափերով բեռների փոխադրման թույլտվությունների տրամադրման շրջանակում Նախարարությունը և ԷԿԵՆԳ-ը ձևավորել են սույն ծառայությունների մատուցման էլեկտրոնային համակարգ, որը պարունակում է նաև ինքնաշխատ եղանակով ձևավորվող թույլտվությունների էլեկտրոնային գրանցամատյան՝ անհրաժեշտ ամբողջական տեղեկատվությամբ: Նշված գործընթացը ավարտական փուլում է, համակարգը պատրաստ է, ընթացքում է ՀՀ կառավարության համապատասխան կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագծի	Կատարման ընթացքը կներկայացվի հաջորդիվ իրականացվող հաշվեքննությունների ընթացքում

				քննարկումը: Նախնական գնահատմամբ գործընթացը կավարտվի 2024 թվականի հունիսի վերջին: 2/ 2024 թվականի համար թվայնացվելու են, որի արդյունքում նաև ձևավորվելու է էլեկտրոնային գրանցամատյան, ՏՆԵԿ թույլտվությունների տրամադրման գործընթացը: 3/ 2024 թվականի մայիսի 21-23-ին Իտալիայի Հանրապետության հետ ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորա- և բեռնափոխադրումների միջպետական համաձայնագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ արձանագրությամբ ամրագրվեց երկկողմ փոխադրումների տրամադրման գորրծընթացը թվային միջավայրում իրականացնելու գործընթաց սկսելու մասին, որի արդյունքում կձևավորվի տվյալ թույլտվությունների էլեկտրոնային գրանցամատյան: 4/ Բանակցություններ են վարվում մյուս գործընկեր պետությունների հետ՝ թույլտվությունների փոխանակումը թվայնացնելու ուղղությամբ:	
7	Ձեռնարկել միջոցներ ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության շրջանակներում «Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության միասնական շտեմարան (inspect.am)» համակարգի և երթևեկության անվտանգությանը վերաբերելի այլ էլեկտրոնային համակարգերի միջև ինքնաշխատ եղանակով տեղեկատվության փոխանակման միջավայր ստեղծելու ուղղությամբ:	*ԸՆԴՈՒՆԵԼԻ Է*	*ԸՆԹԱՑՔՈՒՄ Է*	«Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության միասնական շտեմարան (inspect.am)» մասնավոր համակարգը ներկայումս ինտեգրված է երթևեկության անվտանգությանը վերաբերելի այլ էլեկտրոնային համակարգերին, սակայն համակարգի մասնավոր լինելու, տեխնիկական հնարավորությունների սահմանափակության և այլ պատճառներով այլ էլեկտրոնային համակարգերի միջև ինքնաշխատ եղանակով տեղեկատվության փոխանակման լիարժեք միջավայր չի ապահովվում: Խնդրի լիարժեք և ամբողջական լուծումը պայմանավորված է ՀՀ ՏԿԵ նախարարության կողմից նոր էլեկտրոնային համակարգի գործարկմամբ, որի մեկնարկը տրված է, իսկ գործարկումը նախատեսվում է 2025 թվականի սկզբին:	Կատարման ընթացքը կներկայացվի հաջորդիվ իրականացվող հաշվեքննությունների ընթացքում
8	Ձեռնարկել միջոցներ Տրանսպորտային միջոցների սեփականատերերին/շահագործողներին տեխնիկական զննության ժամկետները պահպանելու անհրաժեշտության վերաբերյալ ծանուցումների	*ԸՆԴՈՒՆԵԼԻ Է*	*ԸՆԹԱՑՔՈՒՄ Է*	... սույն առաջարկությունը լիարժեք իրագործելի է վերը նշված էլեկտրոնային համակարգի գործարկմամբ, որի տեխնիկական առաջադրանքում կներառվի սույն առաջարկության տեխնիկական հնարավորությունը:	Կատարման ընթացքը կներկայացվի հաջորդիվ իրականացվող հաշվեքննությունների ընթացքում

	ինքնաշխատ համակարգի ներդրման ուղղությամբ:				
9	Ձեռնարկել միջոցներ էլեկտրոնային համակարգերը Նախարարության գործառույթներն ապահովող բիզնես գործընթացներին առավելագույնս համապատասխանեցնելու և դրանցում լուսապատճենների ու թվային մշակման համար ոչ պիտանի այլ տեղեկատվությունը թվայնացնելու ուղղությամբ՝ թվայնացման բոլոր առավելություններն օգտագործելու նպատակով:	*ԸՆԴՈՒՆԵԼԻ Է*	*ԸՆԹԱՑՔՈՒՄ Է*	Նախարարության կողմից մատուցվող ծառայությունների թվանացման ընթացակարգերում կապահովվի հաշվեքննողի սույն առաջարկությունը: Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների բնագավառում լիցենզիա և ներդիրներ տրամադրելուց հետո բազա է մուտքագրվում ուղևորոփոխադրումներում ներգրավվող տրանսպորտային միջոցների տվյալները: Տվյալ պահին բազան այլ համակարգերի հետ կապված չէ, սակայն տեխնիկական սպասարկումը վերականգնելուց հետո հնարավոր է ապահովել կապը տեսչական մարմնի և Պարեկային ծառայության հետ: Ներկայումս բազային հասանելիություն չկա, սակայն «ԷԿԵՆԳ»-ի հետ ընթանում են աշխատանքներ՝ բազան վերականգնելու և ըստ անհրաժեշտության պետական մարմինների հասանելիություն ապահովելու նպատակով	Կատարման ընթացքը կներկայացվի հաջորդիվ իրականացվող հաշվեքննությունների ընթացքում

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը՝

Ելնելով ընթացիկ հաշվեքննության արդյունքներից և հաշվի առնելով 2023 թվականի պետական բյուջեի տարեկան, 2024 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման նկատմամբ իրականացված հաշվեքննություններով արձանագրված խնդիրների լուծված չլինելու համգամանքը՝ առաջարկվում է.

- Նախորդ հաշվեքննություններով ներկայացված առաջարկությունների իրագործման նպատակով հաստատել միջոցառումների ծրագիր՝ յուրաքանչյուր միջոցառման համար սահմանելով պատասխանատու ստորաբաժանում(ներ)ը և միջոցառման կատարման ժամանակացույցը:

Գագիկ Բարսեղյան _____
Հաշվեքննիչ պալատի անդամ

«31» հոկտեմբեր, 2024 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ,
Մ.Բաղրամյան 19, Երևան
Հայաստանի Հանրապետություն